

Սակայն եկ եւ կրկնակի լաց զկրկնամեռքս թէ
որքանեաց բարդութեանց պարտուցանկաք ի ներ-
քոյ, որոյ վասն ելեալ ի սուրբ ուխտէն՝ տարադէմ
գնացիւք դիմեցաք յայլ օտարական գաւառս՝ ժո-
ղովել զորոմութիւն յաստուածասէր անձանց, առ ի
թեթեւացուցանել զպարտուցն ծանրութիւն։ Եւ
այնպէս շրջաշուրջն գնացիւք հասաք յաջողմամբ
Տեառն՝ յաստուածակեցոյց, արքայանիստ, կայսե-
րապերճ, բազմամարդ քաղաքն Կոստանդնուպոլիս¹։

Եւ վերադիտող նորին առ նոյն ժամանակին,
եպիսկոպոսն Իսահակ՝ ընկալաւ բազում սիրով զմերս
նուաստութիւն եւ յորդորեաց զաստուածասէր ժո-
ղովուրդսն, որք ետուն զորոմութիւն լիալեր, եւ
զբազում յիշատակս զարդուց սրբոյ Տաճարին.
որովք եւ ազատեցաւ Սուրբ Վանքն ի բազմատոկոս
պարտուցն եւ գերազանցապէս շքեղացաւ գերա-
զանց զարդուք հարսն մաքուր, որ չէր յառաջ
բնակին²։ Եւ մեզ ամենեցունց էր յորդորիչ՝ գլուխ

1 Կոլոտ ուղղակի չէ բրած Մուշէն-Պոլիս ճամբոր-
դութիւնը, այլ «շրջաշուրջն գնացիւք», երանի թէ արձա-
նագրեր իր ուղեգծին հանգույցները։ Կոլոտ արդէն Պոլիս
հասած է 1713ին։

2 Իսահակ կամ Սահակ Ա. Ապուշեխցի Պատրիարք,
որ երկիցս պատրիարք եղաւ, նախ 1707 Յունվար 22 –
Սեպտ. 26. երկրորդ՝ 1708 Դեկտ. 7 – 1715 Սեպտ. 11։

Ս. Կարապետի հանգանակութեան, մանաւանդ շի-
նութեան օգնողներուն գլխաւորն է Ակնեցի Եւդուպ ա-
միրան († 1752 Յուլիս 9), որուն գրեթէ կը վերագրէ Ին-
ճիճեան վերաշինութեան գործը։

Շատ չանցաւ, սակայն, 1784ին կրկնեցաւ սոսկալի
երկրաշարժը, նոյն ուղղութեամբ եւ բոլոր վերաշինուած-
ները նորէն կործանեցան։

1788ին, հրաման տրուեցաւ շինութեան. ահագին
պարտք եւ ծախք եղաւ նորէն. այս անգամ բաւական փո-
փոխութիւններ տեղի ունեցան. «Եւ ի շինելն ի ներքս ա-
ռեալ զգաւիթն ընդարձակեցին զեկեղեցին յաւելմամբ 8
սեանց, զղանգակատունն նորոգեցին բարձրագոյն եւ վայե-